ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ		
Հ/Հ	*Փաստաթուղթ*	*Ներկայացման ձև*
1.	***Դեբետային (հաշվարկային) քարտ տրամադրելու և սպասարկելու դիմում****	1. Բանկի աշխատակցի կամ գործակալի կողմից տպագիր տեսքով լրացված և հաճախորդի կողմից ստորագրված բնօրինակ
2.	***Կից քարտի պատվիրման դիմում (միայն կից քարտի պատվիրման դեպքում)***	2. Բանկի աշխատակցի կողմից տպագիր տեսքով լրացված և հաճախորդի կողմից ստորագրված բնօրինակ
3.	***Հաճախորդի նույնականացման փաստաթուղթ*** Բոլոր հաճախորդների համար (ՀՀ քաղաքացի, ոչ ՀՀ քաղաքացի): Անձը հաստատող փաստաթուղթ (<u>ՀՀ քաղաքացիների համար՝</u> անձնագիրը, նույնականացման քարտը կամ ծննդյան վկայական՝ 14-ից մինչև 16 տարեկան անչափահասների դեպքում զինվորական գրքույկը՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, <u>օտարերկրյա քաղաքացիների համար՝</u> օտարերկրյա պետության անձնագիրը կամ ճամփորդական փաստաթուղթը, ՀՀ հատուկ անձնագիրը, մշտական կամ ժամանակավոր կացության քարտը, <u>փախստականների նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝</u> կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը, իսկ <u>ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝</u> ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական), <u>ապաստան հայցողի համար՝</u> ապաստան հայցողի վկայական, <u>քաղաքացիություն չունեցող անձանց համար՝</u> օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթը, ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը, ՀՀ հատուկ	բնօրինակ

	անձնագիրը, մշտական կամ ժամանակավոր կացության քարտը) և հանրային ծառայությունների համարանիշ** (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք) և այլն)	
	Հաճախորդի լուսանկար (միայն եթե դիմումն ընդունվում է գործակալի կողմից)	Էլեկտրոնային ֆայլի տեսքով
4.	***Աշխատավայրից տեղեկանք կամ պետական իրավասու մարմնի կողմից տրամադրված համապատասխան, վավերական վկայական (անձնական, ծառայողական և այլն) կամ ուսանողական գրքույկ կամ տեղեկանք սպացիոնար ուսուցումը հաստատելու վերաբերյալ (եթե վճարային քարտը չի հանդիսանում կից քարտ և միայն սպորև սահմանված դեպքերում)***	բնօրինակ
	- Վճարային քարտը պատվիրվում է աշխատավարձային նախագծի շրջանակներում և Կազմակերպության կողմից չի ներկայացվել աշխատակիցների ցուցակ կամ ցուցակի ժամկետը լրացել է կամ հնարավոր չի եղել ստուգել Նորք ՏՎԿ համակարգի միջոցով	
	- Վճարային քարտը պատվիրվում է ՀՀ քաղաքացի չհանդիսացող հաճախորդի կողմից,	
5.	***Լուսանկար կամ պատկեր (միայն Visa INDIVIDUAL քարտատեսակի համար)******	Էլեկտրոնային ֆայլի տեսքով՝ համապատասխան կայք վերբեռնման միջոցով
ԼՐԱՑՈՒՑԻՉ (ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ) ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ		

1.	***SMS տեղեկացման ծառայություն պատվիրման հայտ*** Փաստաթուղթը կարող է ներկայացվել դեբետային/հաշվարկային քարտի ստացման դիմումի հետ միասին՝ մեկ փաստաթղթով:	1. Բանկի աշխատակցի կողմից տպագիր տեսքով լրացված և հաճախորդի կողմից ստորագրված բնօրինակ կամ, 2. հաճախորդի կողմից տպագիր լրացված և ստորագրված բնօրինակ կամ, 3. հաճախորդի կողմից ձեռագրով լրացված և ստորագրված բնօրինակ:
2.	***Լրացուցիչ ծառայությունների պատվիրման համար այլ դիմումներ*** Փաստաթուղթը կարող է ներկայացվել դեբետային/հաշվարկային քարտի ստացման դիմումի հետ միասին՝ մեկ փաստաթղթով:	1. Բանկի աշխատակցի կողմից տպագիր տեսքով լրացված և հաճախորդի կողմից ստորագրված բնօրինակ կամ, 2. հաճախորդի կողմից տպագիր լրացված և ստորագրված բնօրինակ կամ, 3. հաճախորդի կողմից ձեռագրով լրացված և ստորագրված բնօրինակ:
3.	***Հաճախորդի լուսանկար (քարտի դարձերեսին արտապատկերման ծառայության պատվերի դեպքում)***	3x4 բնօրինակ լուսանկար դիմագծերի հստակ արտապատկերմամբ

* Փաստաթուղթն ընդունվում է անձնական տվյալների բոլոր պարտադիր դաշտերի լրացված լինելու պարագայում:

Փաստաթուղթը կարող է ներկայացվել լիազորված անձի կողմից (Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված լիազորագրերի ներկայացման դեպքում), բացառությամբ կենսաթոշակային քարտի տրամադրման և սպասարկման դիմումների, որոնց դեպքում դիմումը պետք է ներկայացվի անձամբ:

Ոչ ՀՀ և Ոչ ԼՂՀ քաղաքացիների վճարային քարտի տրամադրման դիմումներն

ընդունվում են բացառապես Բանկի Գլխամասային գրասենյակում, բացառությամբ աշխատավարձային քարտերի, որոնց դիմումները ընդունվում են Բանկի բոլոր մասնաճյուղերում: [փոփ.՝ 21.02.17թ. 01/013-61 Լ]

** հանրային ծառայությունների համարանիշի (հանրային ծառայությունների համարանիշ չստանալու դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք) ներկայացումը պարտադիր չէ, եթե Բանկը վերջինիս տվյալները կարող է ստանալ տեղեկատվական կազմակերպությունների միջոցով:

Հանրային ծառայությունների համարանիշը չի պահանջվում Հայաստանի Հանրապետությունում բնակության իրավունք չունեցող օտարերկրյա քաղաքացիների համար:

***Հաճախորդի կողմից ներկայացվող լուսանկարը կամ պատկերը չի կարող պարունակել՝

- Վճարահաշվարկային համակարգի անվանում կամ տարբերանշան՝ բացառությամբ Visa International վճարահաշվարկային համակարգից,

- Քաղաքական, կրոնական և աղանդավոր պնդումներ և տարբերանշաններ, դրոշներ, զինանշաններ և իշխանության այլ տարբերանշաններ,
- Գովազդային նյութեր, բրենդեր և ապրանքանշաններ, աբրեվիատուրաներ, կազմակերպությունների անվանումներ և սիմվոլներ, գրանցված ապրանքանիշներ կրող արտադրանքներ, ներառյալ ապրանքանշան կրող ավտոմեքենաներ և այլ սարքավորումներ կամ իրեր: Բանկի կողմից բացառություններ կարող են արվել աշխատավարձային նախագծերի շրջանակներում Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին վերաբերվող նյութերի մասով,
- Ընթեռնելի կամ ճանաչելի բրենդային կամ ապրանքանիշային հագուստով մարդկանց պատկերներ, այդ թվում բրենդային կամ ապրանքանիշային ավտոմեքենաների կամ այլ սարքավորումների ֆոնի վրա պատկերներ,
- Ալկոհոլային և սպիրտային բաղադրություն ունեցող ցանկացած ապրանքների և ոգելից խմիչքների (ներառյալ շշերի, բաժակների, կուժերի և խմիչքի հետ կապված ժամանացի վայրերի), ծխախոտի, զենքի, խաղաքարտերի և խաղասրահների հետ կապված այլ իրերի պատկերներ,
- Ապրանքանշաններ կամ տարբերանշաններ՝ բացառությամբ առանձին նախագծերի շրջանակներում թողարկվող Visa Individual վճարային քարտերի,
- Հանրահայտ մարդկանց, հասարակական գործիչների, երաժիշտների, սպորտսմենների, հաղորդավարների, մտացածին կերպարների (այդ թվում մուլտիպլիկացիոն կինոնկարների) նկարներ, ֆիլմերից և մուլտֆիլմներից կադրեր, գրքերի իլուստրացիաներ,
- Հեռախոսահամարներ, թվեր, տեքստեր, տառեր, հասցեներ (այդ թվում՝ էլեկտրոնային) ցանկացած լեզուներով կամ URL հասցեներ,
- Հանրության կողմից չընդունվող կամ արգելված սոցիալական խմբերի, փոքրամասնությունների կամ դրանց վերաբերվող տեքստերի, միջոցառումների և իրադարձությունների պատկերներ,
- Մշակութային, ազգային կամ կրոնական արժեքները և գաղափարները վիրավորող նյութեր,
- Պրովոկացիոն կամ սեռական պարունակություն ունեցող նյութեր,
- Բռնություն, հայհոյանք կամ անպարկեշտ տեսարաններ,
- Որևէ հղում Visa International ընկերության կողմից հովանավորվող ընկերություններին,
- Սպասարկման կետում ներկայացված վճարային քարտի մերժմանը հանգեցնող որևէ պատկեր,
- ՀՀ կամ այլ երկրների դրամների կամ մետաղադրամների տարբերանշաններ, այդ թվում հին և շրջանառությունից հանված,
- Կենդանակերպի նշաններ,
- Visa International ապրանքանիշը վարկաբեկող որևէ պարունակություն,
- Այլ պատկերներ, որոնք «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կամ վճարահաշվարկային համակարգի կողմից կհամարվեն անթույլատրելի: